

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ 1907/B02 «Քաղաքացիական դատավարություն–2»

Որակավորման
աստիճան՝

բակալավրի կրթական ծրագիր

Կազմել են՝

իրավ. գիտ. թեկն., դոց. **Ս.Գ.Մեղոյանը**
իրավ. գիտ. թեկն., դոց. **Վ.Վ.Հովհաննիսյանը**

ԾՐԱԳՐԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1907/B02. Զաղաքացիական դատավարություն-2 (5 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (դասախոսություն՝ 40, սեմինար՝ 8, գործնական՝ 16, ինքնուրույն աշխատանք՝ 86 ժամ)
6-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով

Դասընթացի նպատակը

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել առանձին կատեգորիայի գործերի հարուցման, նախապատրաստման, քննության և լուծման առանձնահատկություններին, դատական ակտերի վերանայման ու կատարման ընթացակարգերին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը
Կունենա

Գիտելիք և իմացություն

- հայցային և հատուկ վարույթների կարգով քննվող քաղաքացիական գործերի հարուցման, նախապատրաստման, քննության և լուծման առանձնահատկություններից,
- դատական ակտերը վերաքննության, վճռաբեկության, ինչպես նաև նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով բողոքարկելու և վերանայելու ընթացակարգերից,
- դատական ակտերի հարկադիր կատարման համակարգից, միջոցներից և կատարողական առանձին գործողությունների կատարման կարգից:

Ունակ կլինի (թուն մասնագիտական կարողություններ)

- վերլուծել կոնկրետ քաղաքացիական գործեր և լուծել գործնական խնդիրներ,
- մասնակցել դատավարությունների,
- կազմել քաղաքացիական գործի հարուցումը, նախապատրաստումը, դատաքննությունը, վճռահատությունը, դատական ակտերի վերանայումը և հարկադիր կատարումը միջնորդավորող դատավարական փաստաթղթեր:

Գիտելիքների ստուգման ձևերը, մեթոդները և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված են երկու ընթացիկ գրավոր քննություններ, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Դասընթացն ավարտվում է եզրափակիչ բանավոր քննությամբ՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Գիտելիքների ստուգման մեթոդները և գնահատման չափանիշները ներկայացված են սույն ծրագրում:

ԲԱԺԻՆ I
ՎԱՐՈՒՅԹՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

ԵՆԹԱԲԱԺԻՆ I.
ՀԱՅՑԱՅԻՆ ՎԱՐՈՒՅԹ

ԹԵՄԱ 1.

Հայցային գործերով քաղաքացիական գործի հարուցումը դատարանում

(դասախոսություն՝ 6, գործնական՝ 2 ժամ)

1. Հայց հարուցելու իրավունքի ծագման նախադրյալները:
2. Հայց հարուցելու իրավունքի իրականացման պայմանները (հայց հարուցելու կարգը):
3. Հայցադիմում. հասկացությունը, ձևին և բովանդակությանը ներկայցվող պահանջները, կցվող փաստաթղթերը և այլ նյութերը:
4. Հայց հարուցելու կարգը չպահպանելու հետևանքները: Հայցադիմումի թերությունները վերացնելու կարգը:
5. Հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքերը և դատավարական կարգը:
6. Հայցադիմումի ընդունումը:
7. Քաղաքացիական գործ հարուցելու իրավական հետևանքները:

Հարցեր 1-6 – *Անցկացվում է դասախոսություն՝ գծապատկերների և դատավարական փաստաթղթերի ցուցադրմամբ:*

Հարց 3-6 – *Գործնական պարապմունք: Ուսանողները վերլուծում են հայցադիմումներ, հայցի հարուցման փուլում կայացվող միջանկյալ դատական ակտեր, ձեռք են բերում նշված դատավարական փաստաթղթերը կազմելու հմտություններ:*

Հարց 7 – *Ինքնուրույն աշխատանք:*

Իրավական ակտեր, պարտադիր գրականություն և ուսումնասովանողակ նյութեր

- Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն:
- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրք:
- «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք, հոդվածներ 7-9, 21-22, 31-32, 34, 36, 38:
- **Պետրոսյան Ռ.Գ.**, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, 4-րդ հրատ., - Եր., «Ոսկան Երևանցի» հրատ., 2013:

- **Մեղրյան Ս.Գ.**, Զաղաքացիական դատավարությունը սխեմաներում, Եր., ԵՊՀ հրատ., 2011:

Լրացուցիչ գրականություն

- **Борисова В.Ф.** Возбуждение гражданского судопроизводства. М.: «Юрлитинформ», 2009.
- **Жилин Г.А.** Суд первой инстанции в гражданском процессе. - М.: «Юрайт-М», 2001.
- **Жилин Г.А.** Цели гражданского судопроизводства и их реализация в суде первой инстанции. - М.: «Городец», 2000.
- **Жилин Г.А.** Гражданское дело в суде первой инстанции. - М.: Рос. акад. правосудия: «Городец», 2000.
- Гражданский процесс: Учебник. Отв. ред. проф. **В.В. Ярков.** -8-ое изд., - М.: «Инфотропик», 2012.
- Комментарий к Гражданскому процессуальному кодексу Российской Федерации. Под ред. **М.С. Шакарян.** - М.: «Прспект», 2007.
- Комментарий к Гражданскому процессуальному кодексу Российской Федерации. Под ред. **В.М. Жуйкова, М.К. Треушникова.** - М.: «Городец», 2007.

ԹԵՄԱ 2.

Գործը դատաքննության նախապատրաստելը

(դասախոսություն՝ 4, գործնական՝ 2 ժամ)

1. Գործը դատաքննության նախապատրաստելու փուլի նշանակությունը և խնդիրները: Գործը դատաքննության նախապատրաստելու ժամկետները:
2. Գործը դատաքննության նախապատրաստելու դատավարական գործողությունների ծավալը և բովանդակությունը: Այն դատավարական գործողությունները, որոնք պետք է պարտադիր կատարվեն գործը դատաքննության նախապատրաստելու ընթացքում:
3. Հայցադիմումի պատասխան. ներկայացնելու ժամկետները, ձևը, բովանդակությունը, կցվող փաստաթղթերը և չներկայացնելու հետևանքները:
4. Հակընդդեմ հայցի հարուցումը և այն վարույթ ընդունելու դատավարական կարգը:
5. Նախնական դատական նիստ. նշանակելու հիմքերը և դատավարական կարգը: Նախնական դատական նիստում կատարվող նախապատրաստական գործողությունների ծավալը, բովանդակությունը և իրականացման դատավարական կարգը: Այն նախապատրաստական

գործողությունները, որոնք պետք է կատարվեն միայն նախնական դատական նիստում:

6. Գործը դատաքննության նշանակելը. հիմքերը և դատավարական կարգը: Գործը դատաքննության նշանակելու մասին որոշումը (ձևը, ընդունման կարգը, ներկայացվող պահանջները):
7. Դատավարության մասնակիցների ծանուցումը դատական նիստի ժամանակի և վայրի մասին: Ծանուցագրի ձևը և բովանդակությունը: Ծանուցագրի հետ գործին մասնակցող անձանց ուղարկվող փաստաթղթերը: Պատշաճ ծանուցում: Պատասխանողի փաստացի գտնվելու վայրն անհայտ լինելու դեպքում ծանուցման կարգը:

Չարդեր 1-7 – *Անցկացվում է դասախոսություն՝ գծապատկերների ցուցադրմամբ:*

Չարդեր 1-2, 6-7 – *Գործնական պարապմունք: Ուսանողները նախապես ծանոթանում են Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներին և կազմակերպվում է դրանք քննարկում: Ուսանողները վերլուծում են գործը դատաքննության նշանակելու մասին որոշում և դատական ծանուցագրեր, ձեռք են բերում նշված դատավարական փաստաթղթերը կազմելու հմտություններ:*

Չարդ 5 – *Գործնական պարապմունք: Ուսանողները դատական նիստերի դահլիճում ունկնդրում են նախնական դատական նիստ, որից հետո նիստը նախագահող դատավորի մասնակցությամբ կազմակերպվում է դրա քննարկում:*

Չարդեր 3-4 – *Ինքնուրույն աշխատանք: Ուսանողները կրկնում են հայցի դեմ պատասխանողի շահերի պաշտպանության դատավարական միջոցների վերաբերյալ կյուլթը (աղբյուրը՝ Պետրոսյան Ռ. Գ., Հայաստանի քաղաքացիական դատավարություն, 4-րդ հրատ., - Եր., «Ոսկան Երևանցի» հրատ., 2013) և ուսումնասիրում են Վճռաբեկ դատարանի որոշումները:*

Իրավական ակտեր, պարտադիր գրականություն և ուսումնաստանողական կյուլթեր

- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրք:
- **Պետրոսյան Ռ. Գ.**, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, 4-րդ հրատ., - Եր., «Ոսկան Երևանցի» հրատ., 2013:
- **Մեղրյան Ա. Գ.**, Զաղաքացիական դատավարությունը սխեմաներում, Եր., ԵՊՀ հրատ., 2011:
- Վճռաբեկ դատարանի թիվ ԵԵԴ/1637/02/09 քաղաքացիական գործով 27.05.2011 թ. որոշումը (ԻՄՆ նպատակ է հետապնդում գործը դատաքննության նախապատրաստելը):

- Վճռաբեկ դատարանի թիվ ԵԵԴ/0272/02/08 քաղաքացիական գործով 28.11.2008 թ. որոշումը (Արդյո՞ք դատարանը կաշկանդված է հայցադիմումի պատասխան ներկայացնելու երկշաբաթյա ժամկետով և պարտավոր է դատական նիստ նշանակել այդ ժամկետի ավարտից հետո):
- Վճռաբեկ դատարանի թիվ 3-2236/Ա քաղաքացիական գործով 21.12.2006 թ. որոշումը (Անձանց ո՞ր իրավունքներն են խախտվում, երբ դատարանը նրանց պատշաճ չի ծանուցում դատական նիստի ժամանակի և վայրի մասին և գործը քննում է նրանց բացակայությամբ):
- Վճռաբեկ դատարանի թիվ 3-21/Ա քաղաքացիական գործով 01.02.2008 թ. որոշումը (Ու՞մ կողմից ստորագրված ծանուցագրով կարող է հաստատվել գործին մասնակցող անձին դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ ձևով ծանուցելու փաստը):
- Վճռաբեկ դատարանի թիվ 3-20/ՏԴ քաղաքացիական գործով 01.02.2008 թ. որոշումը (Արդյո՞ք ՀՀ որևէ մարզի դատախազի մասնակցությամբ գործի քննության ընթացքում վերջինս համարվում է պատշաճ ծանուցված, եթե դատական ծանուցագրերը ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազության հասցեով):
- Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/4071/05/09 վարչական գործով 27.12.2011 թ. որոշումը (Ո՞վ է կրում գործի քննության ընթացքում գործին մասնակցող անձի հասցեի փոփոխության մասին դատարանին հայտնելու պարտականություն):
- Վճռաբեկ դատարանի թիվ ԵԾԴ/0883/02/10 քաղաքացիական գործով 29.07.2011 թ. որոշումը (Ինչպե՞ս պետք է իրականացվի գործի քննության վերաբերյալ գործին մասնակցող անձի պատշաճ ծանուցումը):
- Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/0964/02/10 քաղաքացիական գործով 29.11.2011 թ. որոշումը (Արդյո՞ք դատարանը պատասխանողին ծանուցելու անհնարիության դեպքում պարտավոր է ծանուցագիր ուղարկել ոչ միայն հայցվորի նշած հասցեով այլև պատասխանողին սեփականության իրավունքով պատկանող և գործում առկա մեկ այլ բնակարանի հասցեով):
- Վճռաբեկ դատարանի թիվ ԵԾԴ/0531/02/10 քաղաքացիական գործով 04.03.2011 թ. որոշումը (Արդյո՞ք անձը համարվում է դատական նիստի օրվա և ժամի մասին պատշաճ ծանուցված, եթե ծանուցագիրը ուղարկվել է այդ անձի հասցեով, սակայն ստացվել է նույն հասցեում բնավող մեկ այլ անձի կողմից):
- Վճռաբեկ դատարանի թիվ ԵԱԶԴ/1424/02/09 քաղաքացիական գործով 01.10.2010 թ. որոշումը (Արդյո՞ք դատական ծանուցագիրն ընկերության գտնվելու վայրի հասցեով ուղարկելու և այն ստանալու փաստի պայմաններում, ընկերությունը համարվում է պատշաճ ծանուցված: Ո՞վ

Է կրում փոստային ծառայության կողմից փոստային առաքումը հասցեատիրոջը չհանձնելու կամ ոչ պատշաճ անձի հանձնելու փաստի ապացուցման բեռը):

- Դատարանների նախագահների խորհրդի 01.12.2009 թ. թիվ 124 որոշումը «Դատական ծանուցումներն ուղարկելու դատական պրակտիկայի մասին»:

Լրացուցիչ գրականություն

- Гражданский процесс: Учебник. Отв. ред. проф. **В.В. Ярков**. -8-ое изд., - М.: «Инфотропик», 2012.
- **Жилин Г.А.** Суд первой инстанции в гражданском процессе. - М.: «Юрайт-М», 2001.
- **Жилин Г.А.** Цели гражданского судопроизводства и их реализация в суде первой инстанции. - М.: «Городец», 2000.
- **Жилин Г.А.** Гражданское дело в суде первой инстанции. - М.: Рос. акад. правосудия: «Городец», 2000.
- Комментарий к Гражданскому процессуальному кодексу Российской Федерации. Под ред. **М.С. Шакарян**. - М.: «Проспект», 2007.
- Комментарий к Гражданскому процессуальному кодексу Российской Федерации. Под ред. **В.М. Жуйкова, М.К. Треушникова**. - М.: «Городец», 2007.
- **Макаров Ю.Я.** Подготовка гражданских дел к судебному разбирательству. - М.: «Проспект», 2009.
- **Нестерова О.С.** Оценка достаточности доказательств при предъявлении иска и при подготовке дела к судебному разбирательству // В кн.: Иски и судебные решения: сборник статей. Отв. ред.: Рожкова М.А. - М.: «Статут», 2009.
- **Скуратовский М.Л.** Подготовка дела к к судебному разбирательству. - М.: «Волтерс Клувер», 2007.

ԹԵՄԱ 3.

Դատաքննություն

(դասախոսություն՝ 4, գործնական՝ 2 ժամ)

1. Գործի դատաքննության փուլի հասկացությունը և նշանակությունը:
2. Գործի քննության կարգն առաջին ատյանի դատարանում: Դատական նիստը նախագահողը և նրա գործառույթները: Նիստում լուսանկարահանում, ձայնագրություն, տեսաձայնագրում, ինչպես նաև նիստի հեռարձակում կատարելու դատավարական կարգը: Նիստերի դահլիճում ներկա գտնվող անձանց վարքագծի հիմնական կանոնները:

3. Դատական սանկցիաներ, հասկացությունը, կիրառման հիմքերը, տեսակները, անձանց շրջանակը, ում նկատմամբ կարող է կիրառվել այս կամ այն սանկցիան, կիրառման դատավարական կարգը, սանկցիա կիրառելու որոշման ձևը և բողոքարկումը:
4. Դատական նիստի բաղկացուցիչ մասերը: Դատական նիստի նախապատրաստական մասը. խնդիրները, կատարվող դատավարական գործողությունները: Գործի ըստ էության քննության մասը. խնդիրները, կատարվող դատավարական գործողությունները: Գործի քննությունն ավարտելը և վճռի հրապարակման ժամանակը և վայրը հայտարարելը:
5. Վճռահատություն և վճռի հրապարակում: Վճիռ կայացնելու կարգը: Վճիռ կայացնելիս լուծման ենթակա հարցերը: Գործի քննությունը վերսկսելու հիմքերը և կարգը: Վճռի հրապարակման կարգը: Վճռի օրինակը գործին մասնակցած անձանց հանձնելու ժամկետները:
6. Դատական նիստի արձանագրումը. հասկացությունը, նշանակությունը և ձևերը: Գործին մասնակցող անձանց՝ դատական նիստի արձանագրությանը ծանոթանալու և դրա վերաբերյալ դիտողություններ անելու իրավունքները:

Ֆարցեր 1-2, 4-5 – *Անցկացվում է դասախոսություն՝ գծապատկերների ցուցադրմամբ:*

Ֆարցեր 2-4 – *Գործնական պարապմունք: Ուսանողները դատական նիստերի դահլիճում ունենդրում են դատական նիստ, որից հետո նիստը նախագահող դատավորի մասնակցությամբ կազմակերպվում է դրա քննարկում, կամ լուծում են խնդիրներ և քննարկում են խնդրահարույց հարցերը:*

Ֆարցեր 3, 6 – *Ինքնուրույն աշխատանք:*

Իրավական ակտեր, պարտադիր գրականություն և ուսումնասովանողական կյուլթեր

- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրք:
- Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք:
- **Պետրոսյան Ռ.Գ.**, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, 4-րդ հրատ., - Եր., «Ոսկան Երևանցի» հրատ., 2013:
- **Մեղրյան Ս.Գ.**, Զաղաքացիական դատավարությունը սխեմաներում, Եր., ԵՊՀ հրատ., 2011:
- Վճռաբեկ դատարանի թիվ 3-118/ՎԴ քաղաքացիական գործով 02.03.2007 թ. որոշումը (Անձանց ո՞ր իրավունքներն են խախտվում, երբ դատարանը դատական նիստը սկսում է նշանակված ժամից ուշ):

Լրացուցիչ գրականություն

- Гражданский процесс: Учебник. Отв. ред. проф. **В.В. Ярков**. -8-ое изд., - М.: «Инфотропик», 2012.
- **Жилин Г.А.** Суд первой инстанции в гражданском процессе. - М.: «Юрайт-М», 2001.
- **Жилин Г.А.** Цели гражданского судопроизводства и их реализация в суде первой инстанции. - М.: «Городец», 2000.
- **Жилин Г.А.** Гражданское дело в суде первой инстанции. - М.: Рос. акад. правосудия: «Городец», 2000.
- Комментарий к Гражданскому процессуальному кодексу Российской Федерации. Под ред. **М.С. Шакарян**. - М.: «Проспект», 2007.
- Комментарий к Гражданскому процессуальному кодексу Российской Федерации. Под ред. **В.М. Жуйкова, М.К. Треушникова**. - М.: «Городец», 2007.

ԹԵՄԱ 4.

Գործի քննության հետաձգումը և վարույթի կասեցումը

(դասախոսություն՝ 2, գործնական՝ 2 ժամ)

1. Գործի քննության հետաձգումը. հասկացությունը, հիմքերը, դատավարական կարգը:
2. Գործի վարույթի կասեցումը. հասկացությունը, տարբերությունը գործի քննությունը հետաձգելուց, հիմքերը, դատավարական կարգը: Գործի քննությունը վերսկսելը:

***Չարդեր 1-2** – Անցկացվում է դասախոսություն՝ գծապատկերների և դատավարական փաստաթղթերի ցուցադրմամբ:*

***Չարդեր 1-2** – Գործնական պարապմունք, որի ընթացքում քննարկվում են խնդրահարույց հարցերը, Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները և լուծվում են խնդիրներ:*

հրավական ակտեր, պարտադիր գրականություն և ուսումնասովանդակ նյութեր

- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրք:
- **Պետրոսյան Ռ.Գ.**, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, 4-րդ հրատ., - Եր., «Ոսկան Երևանցի» հրատ., 2013:
- **Մեղրյան Ս.Գ.**, Քաղաքացիական դատավարությունը սխեմաներում, Եր., ԵՊՀ հրատ., 2011:

- Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/1766/02/08 քաղաքացիական գործով 11.08.2009 թ. որոշումը (Արդյո՞ք գործի քննությունը հետաձգելու հայեցողական լիազորությունը իրականանցելու դատարանի իրավունքը կրում է բացարձակ բնույթ):
- Վճռաբեկ դատարանի թիվ 3-59/ՏԴ քաղաքացիական գործով 01.02.2008 թ. որոշումը (Արդյո՞ք գործի քննությունը հետաձգելու վերաբերյալ միջնորդությունը դատարանի համար պարտադիր է գործի քննությունը հետաձգելու համար և արդյո՞ք գործի քննությունը հետաձգելու հիմքի առկայության դեպքում գործի քննությունը չհետաձգելը հանգեցնում է անձի արդար դատաքննության իրավունքի խախտման):
- Վճռաբեկ դատարանի թիվ 3-378/ՏԴ քաղաքացիական գործով 02.03.2007 թ. որոշումը (Արդյո՞ք ապացույցների ներկայացման և իրավական պաշտպանության կազմակերպման համար ողջամիտ ժամկետի տրամադրման անհրաժեշտությունը դատարանի համար պարտադիր հիմք է գործի քննությունը հետաձգելու համար):
- Վճռաբեկ դատարանի թիվ 3-346/ՏԴ քաղաքացիական գործով 18.05.2007 թ. որոշումը (Արդյո՞ք դատարանը, մերժելով Ընկերության ներկայացուցչի միջնորդությունը գործի քննությունը հետաձգելու վերաբերյալ, խախտել է անձի՝ Սահմանադրության 19-րդ հոդվածով և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ արդար դատաքննության իրավունքը):
- Վճռաբեկ դատարանի թիվ 3-1822/ՏԴ քաղաքացիական գործով 26.10.2006 թ. որոշումը (Արդյո՞ք դատական նիստը հետաձգելու վերաբերյալ միջնորդությունը դատարանի համար պարտադիր հիմք է գործի քննությունը հետաձգելու համար):
- Վճռաբեկ դատարանի թիվ ԵՇԴ/1216/02/10 քաղաքացիական գործով 29.06.2010 թ. որոշումը (Արդյո՞ք բնակարանից վտարելու հայցի քննության ընթացքում այլ դատարանում պատասխանող կողմում հանդես եկող անձի կողմից տվյալ բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման հայց ներկայացնելը հիմք է վտարման պահանջով գործի վարույթը կասեցնելու համար):
- Վճռաբեկ դատարանի թիվ ԵԵԴ/1048/02/08 քաղաքացիական գործով 27.05.2011 թ. որոշումը (Արդյո՞ք դատարանը կասեցված գործի վարույթը վերսկսելիս պետք է անդրադառնա կասեցման համար հիմք հանդիսացող բոլոր հանգամանքներին: Ո՞ր դեպքում է գործի վարույթի կասեցման համար հիմք հանդիսացող հանգամանքը համարվում վերացված, երբ այն կասեցվել է մինչև այլ քաղաքացիական կամ քրեական գործով որոշում կայացնելը գործի քննության անհնարինության հիմքով):

Լրացուցիչ գրականություն

- Гражданский процесс: Учебник. Отв. ред. проф. **В.В. Ярков**. -8-ое изд., - М.: «Инфотропик», 2012.
- **Жилин Г.А.** Суд первой инстанции в гражданском процессе. - М.: «Юрайт-М», 2001.
- **Жилин Г.А.** Гражданское дело в суде первой инстанции. - М.: Рос. акад. правосудия: «Городец», 2000.
- Комментарий к Гражданскому процессуальному кодексу Российской Федерации. Под ред. **М.С. Шакарян**. - М.: «Проспект», 2007.
- Комментарий к Гражданскому процессуальному кодексу Российской Федерации. Под ред. **В.М. Жуйкова, М.К. Треушникова**. - М.: «Городец», 2007.

ԹԵՄԱ 5.

Գործի վարույթն ավարտելը՝ առանց վեճն ըստ էության լուծելու

(դասախոսություն՝ 2, գործնական՝ 2 ժամ)

1. Հայցը (դիմումը) առանց քննության թողնելը, հասկացությունը, հիմքերը, դատավարական կարգը և հետևանքները: Հայցը (դիմումը) առանց քննության թողնելու մասին դատարանի որոշումը (ծևը, բողոքարկման կարգը, վերացնելու հետևանքները): Գործի քննությունը վերսկսելը: Սկզբնական հայցն առանց քննության թողնելու ազդեցությունը հակընդդեմ հայցի վրա:
2. Գործի վարույթը կարճելը, հասկացությունը, տարբերությունը հայցը (դիմումը) առանց քննության թողնելուց, հիմքերը, դատավարական կարգը և հետևանքները: Գործի վարույթը կասեցնելու և վերսկսելու մասին դատարանի որոշումները (ծևը, բողոքարկումը, վերացնելու հետևանքները):

***Հարցեր 1-2** – Անցկացվում է դասախոսություն՝ գծապատկերների և դատավարական փաստաթղթերի ցուցադրմամբ:*

***Հարցեր 1-2** – Գործնական պարամունք, որի ընթացքում քննարկվում են խնդրահարույց հարցերը, Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները և լուծվում են խնդիրներ:*

Իրավական ակտեր, պարտադիր գրականություն և ուսումնասովանողակ կյուբեր

- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրք:

- **Պետրոսյան Ռ.Գ.**, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, 4-րդ հրատ., - Եր., «Ոսկան Երևանցի» հրատ., 2013:
- **Մեղրյան Ս.Գ.**, Զաղաքացիական դատավարությունը սխեմաներում, Եր., ԵՊՀ հրատ., 2011:
- ՀՀ դատարանների և ախաբահների խորհրդի 2000 թ. փետրվարի 2-ի թիվ 19 որոշումը «Հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու վերաբերյալ օրենսդրության կիրառման դատական պրակտիկայի մասին» // http://www.court.am/files/news/23_am.pdf
- Վերաքննիչ քաղաքացիական դատարանի թիվ ԱՐԱԴ2/0304/02/09 քաղաքացիական գործով 11.05.2011 թ. որոշումը (հայցերի նույնություն):
- Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/0335/02/09 քաղաքացիական գործով 05.02.2010 թ. որոշումը (Արդյո՞ք բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասերին կից ավելի օգտագործվող հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման պահանջով գործերը ենթական են դատարանում քննության):
- Վճռաբեկ դատարանի թիվ ԵԱԶԴ/0773/02/09 քաղաքացիական գործով 30.07.2010 թ. որոշումը (Արդյո՞ք մուտքի ուղի համարվող ընդհանուր սեփականության ներքո գտնվող հողամասից բաժինն առանձնելու պահանջ ներկայացված լինելու դեպքում գործի վարույթը ենթակա է կարճման, եթե ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով մերժվել է նույն հասցեում ընդհանուր մուտքի ճանապարհի հանդիսացող վիճելի հողամասի բաժանման մասին պահանջը):
- Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/0407/02/11 քաղաքացիական գործով 25.12.2012 թ. որոշումը (Գործի վարույթի կարճումը նույն անձանց միջև, նույն առարկայի մասին միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի առկայության պարագայում):
- Վճռաբեկ դատարանի թիվ ԵԾԴ/0473/02/10 քաղաքացիական գործով 27.05.2011 թ. որոշումը (Արդյո՞ք հայցի հիմքը կազմող փաստական հանգամանքները հիմնավորող ապացույցը տվյալ դատավարության շրջանակներում չներկայացնելու պարագայում նույն փաստական հանգամանքների հիման վրա հայց ներկայացնելու դեպքում տվյալ ապացույցը ներկայացնելը կարող է որակվել որպես այլ հիմքով հայցի ներկայացում):
- Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/2633/02/08 քաղաքացիական գործով 25.12.2012 թ. որոշումը (Արդյո՞ք առուվաճառքի պայմանագրի կողմ գնորդի մահից հետո նրա կողմից անշարժ գույքի վերաբերյալ կնքված առուվաճառքի պայմանագրի և դրա հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցման վիճարկումը կարող է գնահատվել որպես անձնական, ժառանգատուի անձի հետ անխզելիորեն կապված իրավունքի վիճարկում, որի դեպքում իրավահաջորդությունը բացառվում է):

Լրացուցիչ գրականություն

- Гражданский процесс: Учебник. Отв. ред. проф. **В.В. Ярков**. -8-ое изд., - М.: «Инфотропик», 2012.
- **Жилин Г.А.** Суд первой инстанции в гражданском процессе. - М.: «Юрайт-М», 2001.
- **Жилин Г.А.** Гражданское дело в суде первой инстанции. - М.: Рос. акад. правосудия : «Городец», 2000.
- Комментарий к Гражданскому процессуальному кодексу Российской Федерации. Под ред. **М.С. Шакарян**. - М.: «Проспект», 2007.
- Комментарий к Гражданскому процессуальному кодексу Российской Федерации. Под ред. **В.М. Жуйкова, М.К. Треушников**. - М.: «Городец», 2007.

ԹԵՄԱ 6.

Առաջին ատյանի դատարանի դատական ակտերը

(դասախոսություն՝ 4, գործնական՝ 2 ժամ)

1. Դատական ակտերի հասկացությունը և տեսակները (վճիռներ, որոշումներ):
2. Վճռի ձևը, կառուցվածքը և բովանդակությանը ներկայացվող ընդհանուր և հատուկ պահանջները:
3. Վճռին ներկայացվող պահանջները (օրինականություն, հիմնավորվածություն, պատճառաբանվածություն, որոշակիություն, անպայմանականություն, լրիվություն):
4. Վճռի թերությունների վերացումն այն կայացնող դատարանի կողմից. հասկացությունը, հիմքերը և սահմանները: Լրացուցիչ վճիռ. հասկացությունը, կապը հիմնական վճռի հետ, կայացնելու հիմքերը, դատավարական կարգը և ժամկետները: Վրիպակների և թվաբանական սխալների ուղղումը. հիմքերը, սահմանները, դատավարական կարգը և ժամկետները: Վճռի պարզաբանումը. հասկացությունը, հիմքերը, սահմանները, դատավարական կարգը և ժամկետները:
5. Վճիռն օրինական ուժի մեջ մտնելու ժամկետները: Հրապարակման պահից օրինական ուժի մեջ մտնող վճիռներ: Վճիռը հրապարակման պահից օրինական ուժի մեջ հայտարարելու հիմքերը:
6. Վճռի օրինական ուժի իրավական հետևանքները (անփոփոխելիություն, բացառիկություն, պարտադիրություն, նախադատելիություն, կատարելիություն): Իրավական որոշակիության սկզբունքը և վճռի օրինական ուժը:
7. Միջանկյալ դատական ակտերի հասկացությունը, նշանակությունը և դասակարգումը (առանձին ակտով ձևակերպվող որոշումներ և

արձանագրային որոշումներ, բողոքարկման ենթակա և ոչ ենթակա որոշումներ, նախապատրաստական, արգելող և լրացնող որոշումներ):

8. Առանձին ակտի ձևով կայացվող միջանկյալ դատական ակտերի բովանդակությունը:
9. Միջանկյալ դատական ակտերի ուժի մեջ մտնելու պահը:

Չարդեր 1-3, 5-6 – *Անցկացվում է դասախոսություն՝ գծապատկերների և դատավարական փաստաթղթերի ցուցադրմամբ:*

Չարդեր 2-4 – *Գործնական պարապմունք, որի ընթացքում քննարկվում են ՄԻԵԴ-ի, ՀՀ ՍԴ-ի և Վճռաբեկ դատարանի որոշումները, լուծվում են խնդիրներ և վերլուծվում են ուսանողներին ներկայացված վճիռներ:*

Չարդեր 7-9 – *Ինքնուրույն աշխատանք:*

Իրավական ակտեր, պարտադիր գրականություն և ուսումնաստանողական կյուրթեր

- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրք:
- **Մեղրյան Ս.Գ.**, Առաջին ատյանի դատարանի քաղաքացիական գործերով դատական ակտերը, - Եր.: ԵՊՀ հրատ., 2010:
- **Մեղրյան Ս.Գ.**, Զաղաքացիական դատավարությունը սխեմաներում, Եր., ԵՊՀ հրատ., 2011:
- ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 2008 թ. հունիսի 13-ի թիվ 122 որոշումը «Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտերի կառուցվածքը հաստատելու մասին»:
- ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 3-365/ՎԴ քաղաքացիական գործով 2008 թ. ապրիլի 4-ի որոշումը (Ո՞ր դատական ակտերն են գործն ըստ էության լուծող):
- ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 3-2504/ՏԴ քաղաքացիական գործով 2006 թ. դեկտեմբերի 21-ի որոշումը (Ռատական ակտի իրավական հիմնավորվածության հարցի վերաբերյալ):
- ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 3-130(Ա) քաղաքացիական գործով 2008 թ. փետրվարի 1-ի որոշումը (Ինչպիսի՞ տարրեր է իր մեջ ներառում դատական ակտի իրավական հիմնավորվածությունը):
- ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/0292/05/08 վարչական գործով 2008 թ. հոկտեմբերի 30-ի որոշումը (Ի՞նչպիսի հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին):
- ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԱԶԴ/0466/02/08 քաղաքացիական գործով 2009 թ. փետրվարի 13-ի որոշումը (Ինչպիսի՞ն պետք է լինի

դատական ակտի պատճառաբանական և եզրափակիչ մասերի հարաբերակցությունը):

- ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԱՐԴ/0062/02/08 քաղաքացիական գործով 2009 թ. փետրվարի 13-ի որոշումը (Խնչն է կազմում իրավական որոշակիության սկզբունքի բովանդակությունը):
- ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/3468/02/08 քաղաքացիական գործով 2010 թ. ապրիլի 2-ի որոշումը (Դատական ակտը պարզաբանելու լիազորության մասին):

Լրացուցիչ գրականություն

- **Безруков А.М.** Преюдициальная связь судебных актов. - М.: «Волтерс Клувер», 2007.
- Гражданский процесс: Учебник. Отв. ред. проф. **В.В. Ярков.** -8-ое изд., - М.: «Инфотропик», 2012.
- **Загайнова С.К.** Судебные акты в механизме реализации судебной власти в гражданском и арбитражном процессе. - М.: «Волтерс Клувер», 2007.
- **Загайнова С.К.** Теоретические проблемы характеристики судебных актов в гражданском и арбитражном процессах // В кн.: Проблемные вопросы гражданского и арбитражного процессов. Под ред. Лесницкая Л.Ф., Рожкова М.А. - М.: «Статут», 2008.
- **Загайнова С.К.** Инстанционная самостоятельность судебных актов в гражданском и арбитражном процессах // В кн.: Проблемы пересмотра судебных актов в гражданском и арбитражном процессах. Сборник научных статей. Отв. ред.: Р.Ф. Каллистратова, М.А. Фокина. - М.: РАП, 2008.
- **Зейдер Н.Б.** Судебное решение по гражданскому делу. - М.: «Юридическая литература», 1966.
- Комментарий к Гражданскому процессуальному кодексу Российской Федерации. Под ред. **М.С. Шакарян.** - М.: «Проспект», 2007.
- Комментарий к Гражданскому процессуальному кодексу Российской Федерации. Под ред. **В.М. Жуйкова, М.К. Треушников.** - М.: «Городец», 2007.
- Шварц М.З. К вопросу о видах судебных решений // В кн.: Тенденции развития гражданского процессуального права России. Сборник научных статей. Гл. ред.: Дамения И.Х. - СПб.: «Юрид. центр Пресс», 2008.
- **Сахнова Т.В.** Законная сила как атрибут правосудия // В кн.: Тенденции развития гражданского процессуального права России. Сборник научных статей. Гл. ред.: Дамения И.Х. - СПб.: «Юрид. центр Пресс»,

2008.

- **Скобелев В.П.** Понятие и содержание законной силы судебного решения // В кн.: Тенденции развития гражданского процессуального права России. Сборник научных статей. Гл. ред.: Дамения И.Х. - СПб.: «Юрид. центр Пресс», 2008.
- **Тарасенко Ю.А.** О некоторых проблемах преюдиции судебных актов // В кн.: Иски и судебные решения: сборник статей. Отв. ред.: Рожкова М.А. - М.: «Статут», 2009.
- **Հաջիանաստասիուն ընդդեմ Հունաստանի** գործով ՄԻԵԴ-ի 16.12.1992 թ. վճիռը:
- **Բուրդոլն ընդդեմ Ռուսաստանի** գործով ՄԻԵԴ-ի 07.05.2002 թ. վճիռը:
- ՀՀ սահմանադրական դատարանի որոշումը քաղաքացի Արուսյակ Աթանեսյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 221-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի՝ ՀՀ սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով:

ԹԵՄԱ 7.

Պարզեցված վարույթները քաղաքացիական դատավարությունում

(դասախոսություն՝ 2 ժամ)

1. Պարզեցված վարույթների էությունը, տեսակները և հիմնական առանձնահատկությունները:
2. Արագացված դատաքննություն հասկացությունը, նշանակությունը, թույլատրելիության պայմանները և կիրառման հիմքերը:
3. Արագացված դատաքննության հարուցումը և գործի ըստ էության լուծումը: Արագացված դատաքննության կարգով կայացված վճիռի առանձնահատկությունները:
4. Արագացված դատաքննություն կիրառելու մասին որոշման վերացումը և գործի ըստ էության քննությունը:
5. Վճարման կարգադրություն արձակելու գործերի վարույթի էությունը և թույլատրելիության պայմանները:
6. Վճարման կարգադրություն արձակելու վարույթի հարուցումը:
7. Վճարման կարգադրություն արձակելու դատավարական կարգը: Դիմումը մերժելու հիմքերը և հետևանքները:
8. Վճարման կարգադրությունը որպես դատական ակտ: Վճարման կարգադրության ձևը և բովանդակությունը:
9. Պարտապանի կողմից առարկություններ ներկայացնելու և չներկայացնելու հետևանքները:
10. Վճարման կարգադրությունը բողոքարկելու հիմնախնդիրը:

11. Զաղաքացու կյանքին կամ առողջությանը սպառնացող վտանգը կանխելու վերաբերյալ վարույթը:

Չարդ 1 – *Անցկացվում է դասախոսություն՝ գծապատկերների և դատավարական փաստաթղթերի ցուցադրմամբ:*

Չարդեր 2-11 – *հնքնուրույն աշխատանք:*

Իրավական ակտեր, պարտադիր գրականություն և ուսումնասովանողակ կյուլթեր

- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրք:
- **Պետրոսյան Ռ.Գ.**, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, 4-րդ հրատ., - Եր., «Ոսկան Երևանցի» հրատ., 2013:
- **Մեղրյան Ս.Գ.**, Առաջին ատյանի դատարանի քաղաքացիական գործերով դատական ակտերը, - Եր.: ԵՊՀ հրատ., 2010:
- **Մեղրյան Ս.Գ.**, Զաղաքացիական դատավարությունը սխեմաներում, Եր., ԵՊՀ հրատ., 2011:
- ՀՀ դատարանների և քաղաքացիական խորհրդի 2005 թ. դեկտեմբերի 8-ի թիվ 81 որոշումը «ՀՀ դատարանների կողմից արձակվող վճարման կարգադրության օրինակելի ձևը հաստատելու մասին»:
- Վճռաբեկ դատարանի թիվ ԵԱԶԳ/1494/02/10 քաղաքացիական գործով 14.10.2011 թ. որոշումը (կրագացված դատաքննություն կիրառելու հարցի մասին):
- Վճռաբեկ դատարանի թիվ 3-2431/ՎԴ քաղաքացիական գործով 26.01.2007 թ. որոշումը (Ակնհայտ անհիմն հայց ներկայացրած անձի պատասխանատվության մասին):
- Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ1/0522/05/09 վարչական գործով 01.10.2010 թ. որոշումը (կրոյո՞ք վճարման կարգադրությունը անձին պատշաճ ձևով չուղարկելով՝ դատարանը խախտում է վերջինիս՝ հակընդդեմ հայց ներկայացնելու իրավունքը):
- Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ3/0627/03/09 վարչական գործով 02.04.2010 թ. որոշումը (կրոյո՞ք վճարման կարգադրության արձակման մասին պատասխանողին ոչ պատշաճ ծանուցելը խոչընդոտում է վերջինիս՝ վարչական ակտը վիճարկելու իրավունքի իրականացմանը):

Լրացուցիչ գրականություն

- Гражданский процесс: Учебник. Отв. ред. проф. **В.В. Яркв.** -8-ое изд., - М.: «Инфотропик», 2012.

- **Громошина Н.А.** О законной силе судебного приказа // В кн.: Тенденции развития гражданского процессуального права России. Сборник научных статей. Гл. ред.: Дамения И.Х. - СПб.: «Юрид. центр Пресс», 2008.
- Комментарий к Гражданскому процессуальному кодексу Российской Федерации. Под ред. **М.С. Шакарян.** - М.: «Проспект», 2007.
- **Крымский Д.И.** Упрощение гражданского судопроизводства: Российский и зарубежный опыт. - М.: «Юриспруденция», 2008.
- **Решетняк В.И., Черных И.И.** Заочное производство и судебный приказ в гражданском процессе. «Городец», М., 1997.

ԵՆԹԱԲԱԺԻՆ II. ՀԱՏՈՒԿ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ

ԹԵՄԱ 8.

Հատուկ վարույթների գործերի քննության դատավարական առանձնահատկությունները

(ինքնուրույն աշխատանք)

1. Հատուկ վարույթների հասկացությունը, հատկանիշները և տեսակները: Հատուկ վարույթների գործերի քննության կարգը:
2. Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման գործերով վարույթի առանձնահատկությունները:
3. Զաղաքացու որոշակի կարգավիճակ հաստատելու վերաբերյալ գործերով վարույթների առանձնահատկությունները (երեխային որդեգրելու վերաբերյալ, քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչելու և մահացած հայտարարելու, քաղաքացուն անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու, անչափահասին լրիվ գործունակ ճանաչելու (Էմանսիպացիայի), քաղաքացուն հոգեբուժական ստացիոնարում հարկադրաբար տեղավորելու գործերով վարույթները):
4. Կորցված իրավունքների վերականգնման վերաբերյալ գործերով վարույթը (կոչի վարույթ):
5. Գույքը տիրազուրկ ճանաչելու գործերով վարույթի առանձնահատկությունները:
6. Հարկադիր կատարողի դիմումով կողմերի հաշտության համաձայնության հիման վրա դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռը վերանայելը:

Հարցեր 1-6 – ինքնուրույն աշխատանք:

Իրավական ակտեր, պարտադիր գրականություն և ուսումնասովանողական կյուրթեր

- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրք, հոդվածներ 164-204:
- **Պետրոսյան Ռ.Գ.**, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, 4-րդ հրատ., - Եր., «Ոսկան Երևանցի» հրատ., 2013:
- **Մեղրյան Ա.Գ.**, քաղաքացիական դատավարությունը սխեմաներում, Եր., ԵՊՀ հրատ., 2011:
- Վերաքննիչ քաղաքացիական դատարանի թիվ ԵԱՆԴ/0873/02/11 քաղաքացիական գործով 29.08.2011 թ. որոշումը (Փաստը դիմողի համար պետք է ունենա իրավաբանական նշանակություն):
- Վերաքննիչ քաղաքացիական դատարանի թիվ ԵԿԴ/0458/02/10 քաղաքացիական գործով 07.04.2010 թ. որոշումը (Դատական կարգով հաստատման ենթակա փաստերի շրջանակը):
- Վերաքննիչ քաղաքացիական դատարանի թիվ ԵԵԴ/0061/02/10 քաղաքացիական գործով 26.02.2010 թ. որոշումը (Իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատման մասին դիմումը ենթակա չէ դատական քննության, եթե հարցը կարող է լուծվել արտադատարանական կարգով):
- Վճռաբեկ դատարանի թիվ ԵՄԴ/1028/02/10 քաղաքացիական գործով 27.12.2011 թ. որոշումը (Իրավունքի վերաբերյալ վեճի առկայությունը ստուգելիս ինչ հանգամանքներ պետք է պարզի դատարանը):
- Վճռաբեկ դատարանի թիվ 3-1805/Ա քաղաքացիական գործով 28.09.2006 թ. որոշումը (Արդյո՞ք իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման մասին վճիռը բեկանվում է, և դիմումը թողնվում է առանց քննության, եթե իրավունքի մասին վեճ է ծագում առաջին ատյանի դատարանում գործի քննությունից հետո):
- Դատարանների նախագահների խորհրդի 22.12.2000 թ. թիվ 39 որոշումը «Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման գործերով դատական պրակտիկայի մասին»:

Լրացուցիչ գրականություն

- **Պետրոսյան Ռ.Գ.**, Իրավաբանական փաստերի դատական հաստատումը, Եր., 1974:
- Гражданский процесс: Учебник. Отв. ред. проф. **В.В. Яркв.** -8-ое изд., - М.: «Инфотропик», 2012.
- **Елисейкин П.Ф.** Судебное установление юридических фактов. М., 1956.
- **Калистратова Р.Ф.** Установление юридических фактов судом. М., 1958.
- Комментарий к Гражданскому процессуальному кодексу Российской Федерации. Под ред. **М.С. Шакарян.** - М.: «Проспект», 2007.

- Комментарий к Гражданскому процессуальному кодексу Российской Федерации. Под ред. **М.С. Шакарян.** - М.: «Проспект», 2007.
- Комментарий к Гражданскому процессуальному кодексу Российской Федерации. Под ред. **В.М. Жуйкова, М.К. Треушникова.** - М.: «Городец», 2007.
- **Крючков Г.К.** Судебное установление юридических фактов. М., 1955.
- **Чудиновская Н.А.** Установление юридических фактов в гражданском и арбитражном процессе. М.: «Волтерс Клувер», 2008.

ԱՌԱՋԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԸՆՆՈՒԹՅՈՒՆ

Չհտելիքների ստուգման ձևը, մեթոդը և գնահատման չափանիշները

Առաջին ընթացիկ քննության արդյունքներով ստուգվում է սույն ծրագրի 1-ից 8-րդ թեմաների մեջ ներառված հարցերի իմացությունը և գործնական հմտությունների առկայությունը:

Քննությունը գրավոր է:

Քննության ընթացքում ուսանողին տրվող քննական թերթիկը պարունակում է դատավարական փաստաթղթեր վերլուծելու և/կամ կազմելու գործնական հմտությունները ստուգելուն ուղղված 2 առաջադրանք և գործող իրավակարգավորման իմացությունն ու կոնկրետ իրավիճակները վերլուծելու ունակությունը ստուգելուն ուղղված 2 խնդիր:

Առաջադրանքի կատարումը ենթադրում է ներկայացված դատավարական փաստաթղթի (դրա մասի) ուսումնասիրություն, դրանում առկա թերությունների հայտնաբերում և գրավոր վերլուծություն կամ համապատասխան դատավարական փաստաթղթի կազմում: Խնդրի լուծումը ենթադրում է պատասխան և դրա հիմնավորում:

Խնդիրների և առաջադրանքների պատասխանը շարադրելիս ուսանողը պետք է սպառնիչ և հնարավորինս հակիրճ շարադրի տվյալ իրավահարաբերությունը կարգավորող դատավարական նորմերը, վերջիններիս կիրառման կապակցությամբ ՀՀ Սահմանադրական դատարանի և Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները (առկայության դեպքում), տա խնդրում (առաջադրանքում) առկա հանգամանքների իրավական գնահատականը՝ վերջում ձևակերպելով իր վերջնական եզրահանգումը:

Յուրաքանչյուր առաջադրանքի կատարումը և խնդրի լուծումը գնահատվում է առավելագույնը 1 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

Առավելագույն միավորը շնորհվում է համապատասխան շարադրանքի սպառնիչ և ճիշտ լինելու դեպքում: Ճիշտ, սակայն թերի պատճառաբանված պատասխանը կամ ոչ էական թերություններով կազմված դատավարական փաստաթուղթը գնահատվում է «0.5» միավոր: Սխալ, չպատճառաբանված կամ խիստ թերի պատճառաբանված պատասխանը և կազմված դատավարական փաստաթուղթը գնահատվում է «0» միավոր:

Վերջնական գնահատականը որոշվում է բոլոր առաջադրանքների կատարման և խնդիրների լուծման համար շնորհված միավորների հանրագումարով:

Տրամադրվող ժամանակը՝ 80 րոպե:

ԲԱԺԻՆ III
ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ

ԹԵՄԱ 9.

Դատական ակտերի վերանայումը վերաքննության կարգով

(դասախոսություն՝ 4, սեմինար՝ 4, գործնական՝ 2 ժամ)

1. Վերաքննիչ վարույթի հասկացությունը և վերաքննության տեսակները. լրիվ վերաքննություն և ոչ լրիվ վերաքննություն:
2. Վերաքննիչ բողոքարկման իրավունքը: Վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեցող անձինք: Վերաքննության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտերը: Վերաքննիչ բողոք բերելու ժամկետները: Վերաքննիչ բողոք բերելու սահմանափակումները:
3. Դատական սխալի հասկացությունը: Վերաքննիչ բողոք բերելու (դատական ակտը բեկանելու) հիմքերը. նյութական իրավունքի խախտումները, դատավարական իրավունքի խախտումները, նոր և նոր երևան եկած հանգամանքները:
4. Վերաքննիչ բողոք բերելու կարգը: Վերաքննիչ բողոքի կառուցվածքը և բովանդակությունը:
5. Վերաքննիչ բողոքը վերադարձնելը. հիմքերը, հետևանքները, դատավարական կարգը:
6. Վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելը: Վերաքննիչ բողոքի պատասխանը:
7. Վերաքննիչ դատարանի կողմից գործի քննության ժամկետները և դատավարական կարգը:
8. Վերաքննիչ բողոքի քննության սահմանները: Վերաքննիչ դատարանի իրավունքը նոր փաստեր հաստատված կամ ժխտված համարելու և նոր ապացույցներ հետազոտելու հարցում:
9. Վերաքննիչ դատարանի լիազորությունները:
10. Միջանկյալ դատական ակտերի բողոքարկումը, դրանց վերաբերյալ բերված վերաքննիչ բողոքների քննության առանձնահատկությունները:
11. Վերաքննիչ դատարանի որոշումը և դրա օրինական ուժը:

Չարդեր 1-9 – *Անցկացվում է դասախոսություն՝ գծապատկերների և դատավարական փաստաթղթերի ցուցադրմամբ:*

